

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի դեկտեմբերի 3-ին կայացած Գիտական Խորհրդի N5 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 32-ը (ցուցակը կցվում է), նիստին մասնակցում էր նաև ԵՊՀ պրոռեկտոր պրն. Ա.Մալխասյանը

Օրակարգ

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2017-2018 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. Մ.Ա.Գրիգորյան/

Նիստը դեկավարելու համար առաջարկվեց դոց.Պ.Գ.Դավթյանի թեկնածությունը:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Պ.Դավթյանն առաջարկեց սահմանել ռեզլամենտ՝ հաշվետվությունը ներկայացնելու համար հատկացնել 15 րոպե, իսկ ելույթների համար՝ 5 րոպե:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն

ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (զեկուցումը կցվում է):

Հաշվետվությունն ավարտելուց հետո դեկան **Մ.Գրիգորյանը** պատասխանեց տրված բոլոր հարցերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Վ.Պ.Վարդանյանը. Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»: Վ.Վարդանյանը նշեց, որ զեկուցված հաշվետվությունը իր մեջ ներառել էր ֆակուլտետում հսկայածավալ աշխատանքի միայն որոշ հատված: Ստեղծված են

նորմալ պայմաններ թե՛ գիտական և թե՛ ուսումնական գործընթացներն ապահովելու համար: Վ.Վարդանյանը

Թ.Գ.Վարդանյան. Առաջարկում եմ դեկանի 2016-2017 ուս.տարում կատարած աշխատանքը գնահատել բավարար: Խոսքի սկզբում Թ.Վարդանյանը նշեց, որ ցանկացած աշխատանքային գործընթացներում կան և բացթողումներ և ձեռքբերումներ: Ֆակուլտետում մեթոդ խորհրդի բոլոր նիստերում պահպանվել է գիտական որակը զարգացնելու աշխատանքը:

Ա.Հ.Պոտոսյան. Առաջարկում եմ «լավ» գնահատել այն բարդ գործի համար, որը, կարծում եմ, հաջողվել է Մ.Ա.Գրիգորյանին: Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հարցում ֆակուլտետում որևէ խոչընդոտ չկա:

Հ.Բ.Մովսիսյան. Բարձր գնահատելով և կարևորելով դեկանի դեկանատի և ամբիոնների կողմից կատարած աշխատանքներն առաջարկեց գնահատել բավարար: Մովսիսյանն իր խոսքում հրավիրեց ուշադրությունը աշխատակիցների սոց. խնդիրների և “շրջանավարտ-դիմորդ” քանակի նվազման խնդրին: Առաջարկեց բնագիտական թևին դոտացիաներ հատկացնել:

Ռ.Ս.Մովսեսյանը. Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել դրական: Ռ.Ս.Մովսեսյանն իր խոսքում նշեց դեկանի հետ երկար տարիների աշխատանքային ճանապարհ են անցել և առանձնացրեց Մ.Գրիգորյանի՝ որպես դեկավարի, խմորումներից ճիշտ դուրս գալու ունակությունը: Մ.Գրիգորյանը կարողանում է ֆակուլտետի “կլիման” բերել հավասարակշիռ վիճակի:

Մ.Գ.Մանասյան. Բազմիցս ասել եմ որ Մ.Գրիգորյանը լավ «մենեջեր» է: Կոչ արեց երեխաներին հաշվեհարդար չտեսնելու: Ստիպված եմ ասելու որ մեր խորհուրդը որը հաշվեհարդար է տեսնում իրեն սպառել է: Չկա Բանավեճի մթնոլորտը: Գտնում եմ, որ աշխատանք տարված է սակայն կան նաև բավականին շատ բացթողումներ և թերություններ:

Ա.Թ.Գրիգորյան. պ-ն Մ.Ա.Գրիգորյանը ղեկավարում է մոտ 1400 հոգանոց կոլեկտիվը: Մեր ուսանողները 100ավոր անգամ արտահայտել են իրենց կարծիքը ուսանողների խնդիրները լուծելու Մ.Ա.Գրիգորյանի կարողությունը: Պահում է կենտրոնաձիգ ուժը, այդ է պատճառը, որ չափազանց հեշտ է աշխատել և միևնույն ժամանակ շատ

դժվար: Գնահատելով արժանիքներն ու կատարված դրական աշխատանքը առաջարկում են գնահատել բավարար:

ՈւԳԸ նախագահ Ա.ՀԱԿՈՐՅԱՆ. Բարձր գնահատեց դեկանի կատարած աշխատանքը, ուսնողին լսելու պատրաստականությունը, շեշտեց դեկավարների պատրաստականությունը գիտաժողովների և ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործում:

Ս.Ռ.Սուվարյան. Առաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար: Հեշտ է խոցել և վիրավորել մարդու անձը, շատ ավելի դժվար է խոսել մարդու կատարած աշխատանքների վերաբերյալ: Դեկանի կատարած աշխատանքը գնահատելուց պետք է հիշենք բարոյահոգեբանական վիճակը նախքան ֆակուլտետների միավորումը և դրանից հետո: Ունենք Օբյեկտիվ արդյունքներ այս ամենը դեկն Մ.Գրիգորյանի աշխատանքի արդյունք է:

Սահմանափակելով ելույթները

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի կողմից ֆակուլտետում կատարած աշխատանքը գնահատել բավարար

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-32, ՁԵՌՆՊԱՀ -0, ԴԵՄ-0

ՈՐՈՇԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ԵՊՀ պրոռեկտոր Ա.Մալխասյանը նույնպես դրական գնահատեց հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում դեկանի կատարած աշխատանքը:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան